



Հայ Կրթական և Մշակութային Միութիւն, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջան

407 E. Colorado St., Glendale, CA 91205

Tel. (818)243-0366 FAX (818)241-0449

ԼՐԱՏՈՒ

ԱՇՈՒՆ - 1997



ԱՆԻ ՊԱՐԱԽՈՒՄՔԻ ԵՒ ՆՈՒԳԱԽՈՒՄՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՅԷՆ

«Անի» պարախումբի գործունեութիւնը անընդմէջ է: Պարախումբը իր պարուսոյցներ եղիա Հաշոյեանի եւ Սիւրբի Բարսեղեան-Գարբրիեանի ղեկավարութեամբ տեւաբար կ'աշխատի պարային նոր համարներու մտայնացման ու բեմադրման, պարուեստի ասպարէզի մէջ կատարելագործման նոր մակարդակներ նուանելու ուղղութեամբ: Իր ձեռքբերումները «Անի» պարախումբը մշտապէս կը ներկայացնէ նաեւ Լոս Անջելըսի սահմաններէն անդին:

Այսպէս, Հոկտ. 19ին Օրէնն Բաունթիի մէջ ունեցած ելոյթին պիտի յաջորդեն այլ ելոյթներ: Յունուար 25, 1998ին «Անի» պարախումբը պիտի ներկայանայ Սան Տիէկոյի, իսկ Փետրուար 28ին՝ Լաս Վեկասի հանդիսատեսին:

«Անի» պարախումբի կողմէն Լոս Անջելըսի մասնաճիւղը անցեալ ամսուայ ընթացքին դասախօսութիւն մը կազմակերպեց՝ նուիրուած Սուչաւայի հայ գաղութին, հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Մուշեղ Եպս. Մարտիրոսեանի եւ դասախօսութեամբ Սուրէն Գօլանեանի:

Ս Ա Ն Ֆ Ր Ա Ն Ս Ի Ս Ք Ո Յ Ի Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ի Ա Ռ Օ Ր Ե Ա Յ Է Ն

Մասնաճիւղը Հոկտ. 12ին, Mercy High Schoolի սրահին մէջ ներկայացուց variety show մը, որուն մասնակցեցան Հելեն Զինդարեան (երգ), Արաբս Աղազարեան (դաշնամուր), Ալիս Կապլանցեան (ասմունք) եւ «Կռունկ» պարախումբը:

Հոկտ. 17ին «Վասպուրական» սրահը տրամադրուեցաւ գաղութիս ճանչցուած արուեստագէտներէն Վահէ Պերպերեանին: Երեկոյի մասնակիցները

դիտեցին արուեստագէտին նկարչական գործերը, միաժամանակ ծանօթացան անոր գրական գործերուն:

Մասնաճիւղը պիտի հովանաւորէ Հոկտեմբերէն մինչեւ Դեկտեմբեր երկարող դասախօսութիւններու շարք մը «Սփիւռքի մշակոյթը ներկայ պայմաններու մէջ» թեմայով: Դասախօսութիւնները պիտի կարդայ Հայրենիքէն ժամանած Լեւոն Արաքիւսեան: Հայրենի գիտնականը այստեղ կը գտնուի Berkley Համալսարանի Ու. Սարոյեան Հայագիտական ամբիոնի հրաւերով: Դասախօսութիւնները տեղի պիտի ունենան «Գոռուզեան-Զաքարեան-Վասպուրական» Ազգ. վարժարանի սրահին մէջ:

Նոյեմբեր 15ին մասնաճիւղը պիտի իրականացնէ անանդական դարձած տարեկան իր ձեռնարկներէն մէկը: Ճաշկերոյթ-պարահանդէսով մը պատուի պիտի արժանանայ Կարինէ Փեհլիվանեանը, որպէս Տարուայ Համագգայնական: Զեռնարկը պիտի կայանայ «Վասպուրական» սրահին մէջ:

ԼՈՒՐԵՐ ՊՐՐՊԷՆՔԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԷՆ

Պըրպէնքի մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Հոկտեմբեր 24, 25 եւ 26ին, տեղի պիտի ունենայ գեղանկարչական ցուցահանդէս: Իրենց մասնակցութիւնը պիտի բերեն արուեստագէտներ՝ Ալիս Մնացականեան, Ատրիսէ Բարանեան, Վազգէն Բրուտեան եւ Հրայր Շերիֆեան: Ցուցահանդէսի բացումը պիտի կատարուի Ուրբաթ, Հոկտ. 24ին, երեկոյեան ժամը 7:30ին, ուր բացման խօսքով հանդէս պիտի գայ Արա Գազանեան: Մնացեալ օրերուն ցուցահանդէսը բաց պիտի մնայ հետեւեալ ժամերուն. Շաբաթ՝ ժ. 12 - 5ը եւ Կիրակի՝ ժ. 3 - 7ը:

Ընթացիկ աշխատանքներու շարքին, նախատեսուած է կազմակերպել քանաստեղծական երեկոյ մը, որ տեղի պիտի ունենայ Նոյեմբերին: Արա Գազանեան պիտի ներկայացնէ իր վերջին գործը՝ «Ցուցափեղկին մէջ» քանաստեղծութիւններու հատորը:

Նմանօրինակ երեկոյներու կազմակերպումը, որ անանդական դարձած է մասնաճիւղի գործունեութեան մէջ, կ'ստեղծէ լաւագոյն առիթը՝ գրասէր հասարակութեանը ծանօթացնելու գաղութիս երիտասարդ ստեղծագործողներուն, միաժամանակ անոնց հարողակից դարձնելով գրական կեանքի վերջին նորութիւններուն:



Տիգրան Զուխանեան (1837 - 1898)

Գծանկար՝ Պաւել Գուշկեան

**ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՆԵԱՆԻ «ԱՐՇԱԿ Բ»
ՕՊԵՐԱՅԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ**

Մտայագմամբ շուքակաւար ժիրայր Ավագլեանի եւ քեմադրութեամբ Սան Ֆրանսիսքոյի Օպերայի, Տ. Զուխանեանի «Արշակ Բ.» օպերան պիտի ներկայացուի 2000-2001 տարեշրջանին, Սան Ֆրանսիսքոյի մէջ:

Ողջ հայ ժողովուրդի համար մեծ նշանակութիւն ունեցող մշակութային այս իրադարձութեանը իր անվարան մասնակցութիւնը պիտի քեր «Համազգային»ը, ի թիւս այլ կազմակերպութիւններու: «Համազգային»ի Արեւմտ. Ամերիկայի Շրջ. Վարչութիւնը արդէն ունի իր ներկայացուցիչը «Արշակ-2000» յանձնախումբին մէջ յանձին վարչութեան անդամ Տիգրան Եփրեմեանի: Ստեղծուած է «Արշակ Բ.»ի գերբը (logո), որուն հեղինակն է «Համազգային»ի Լոս Անճելըսի մասնաճիւղի անդամ, նկարիչ Պաւել Գուշկեան:

Փ Ա Ս Ա Տ Ի Ն Ա Յ Ի Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ

Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն, Փաստիւնայի «Համազգային»ի «Լեւոն Շանք» թատերախումբը յաջողութեամբ հանդէս եկաւ հինգ ելոյթներով, (վերջինը՝ Կլէմտէյի Կեդրոնական Գրադարանի սրահին մէջ, որպէս ցերեկոյթային ելոյթ) ներկայացընելով Ռիլըմ Սարոյեանի *My Heart's In The Highlands* թատերախաղը, որուն իրենց մասնակցութիւնը քերին՝ Վաչէ Ազարակեան, Գրիգոր Ալանահան, Տէն Ալեմշահ, Ժագ Արմուտիբեան, Թամար Զէյթլեան, Արամ Հեվոյեան, Գօգօ Ճաղըլեան, Ղուկաս "Luke" Ուրֆալի, Արմէն Պապասօլուբեան, Մարի Պասմահան, Բաֆֆի Պատալեան, Շանք Տապաղեան, Սագօ Տատոյեան (դերուսոյց), Լիզա Տօնոյեան, Թամար Օհանեան եւ խումբ մը ուրիշներ՝ քեմին վրայ ժողովուրդ ներկայացնող:



Հովիտի Մասնաճիւղը Կը Տեղեկացնէ



Ինչպէս անցեալ տարիներուն, այս տարի եւս, մասնաճիւղը ունեցաւ իր տարեկան ցուցահանդէս-վաճառքը, որը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 5-ին «Աւետիսեան» սրահին մէջ:

Զեւոնարկին մասնակցեցան արուեստագէտներ

Շողեր Չիրիքիան - (Ծաղիկներով յարդարում) - մասնակցած է Համազգայինի, ՀՕՄ-ի, ինչպէս նաեւ WITTIER ART ASSOC.ի ցուցահանդէսներուն:

Նորիկ Դիւանջեան - (Նկարիչ) - մասնակցած է Համազգայինի ցուցահանդէսներուն: Արուեստի նոր դպրոց մը ստեղծելու իր փորձերը ներկայացուող են MARK ALLEN GALLERIES-ի կողմէ:

Ռաֆֆի - (Նկարիչ) - Աշխատած է Մեքսիկացի որմանկարներու վարպետ (muralist) Դիեգո Ռիվերայի հետ: Մասնակցած է շատ մը ցուցահանդէսներու, որոնցմէ են ARMENIAN ALLIED ARTS ASSOC., BOGNAR GALLERY, ROCKFELER COLLECTION GALLERY, BENTLY GALLERY, FISHER GALLERY.

Ճ. Փիրաքօ - (Նկարիչ) - Ունեցած է բազմաթիւ ցուցահանդէսներ, որոնցմէ մասնակցութիւնը SALON DES ARTISTES FRANCAIS-ին: Իր գործերը կը գտնուին Վենետիկի, Երեւանի, Լիբանանի, Արգենտինայի եւ այլ վայրերու թանգարաններու մէջ:

Զ. Փրիկեան - (Նկարիչ) - Մասնակցած է շարք մը ցուցահանդէսներու, ինչպէս DANTE ALIGIERI SOCIETY OF MASSACHUSETTS, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի եւ Թէքեյեան Մշակութային Միութեան: Իր գործերը կը գտնուին անձնական եւ ոչ անձնական հաւաքածոներու մէջ:

Վ. Մաթեան - (Գրաֆիկա) - Իր գործերը ցուցադրուած են INTL. ART CENTER-ի, ST. ELIAS CULTURAL CTR-ի, CHARLES AIDIKOFF SCREENING ROOM-ի, Թէքեյեան Մշակութային Միութեան եւ այլոց կողմէ:

Ա. Զիւնեան - (Նկարիչ) - Ուսանելով INTERIOR DESIGN OF WASHINGTON DC, PIERCE COLLEGE-ի մէջ, մասնակցած է շարք մը խմբական ցուցահանդէսներու Սաուդական Արաբեայի մէջ:

Շ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Համազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կեդր. Վարչութեան անդամ դոկտ. Հրանդ Մարգարեան ղսասխօսութիւն մը պիտի կարդայ՝ «Արեւմտահայաստան՝ Երագ, քար ու պատմութիւն» խորագրով, «Ֆերահեան» Ազգ. Վարժարանի «Տգիւրանեան» սրահին մէջ, Հոկտեմբեր 24, 1997ին:

(շարունակութիւն էջ 3)

**ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ
ԿԵՐՊԱՐՈՒՄՆԵՐ**

Արծաթեայ կանթեղ (19րդ դար)


Կերպարուեստը տարածական արուեստներու այն բաժինն է, որ կ'ընդգրկէ գեղանկարչութիւնը, քանդակագործութիւնը, գրաֆիկան եւ լուսանկարչութիւնը: Արուեստի այս տեսակները գեղարուեստօրէն կարտացոլեն իրականութիւնը, կուտան մարդու արտաբիւն եւ ներքին կերպարը, առարկաներու գոյնը, ծաւալը:

Ըլլալով գեղագիտական աշխարհընկալում, կերպարուեստը կարեւոր դեր կը խաղայ մարդու գաղափարական եւ հոգեւոր դաստիարակութեան գործին մէջ: Դիտողին վրայ անմիջականօրէն ազդելու յատկութեան շնորհիւ, կերպարուեստը նշանակալից դեր կը խաղայ որպէս գաղափարներու արծարծման եւ պայքարի միջոց:

Աշխարհի մէջ կան կերպարուեստի շարք մը թանգարաններ, ուր կը պահուին արուեստի այս տեսակներու բազմաթիւ հաւաքածուներ:



Յ. Յակոբեան - «Վիշտ»



Յանցկեն (Filigrane)

ԱՐՄԱԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

**Աշխատանքներ Կլէնտէլի
Մասնաճիւղէն Ներս**



Մանկապատանեկան տարիքի երեխաներու գեղագիտական դաստիարակութեան հարցը կազմած է Կլէնտէլի Մասնաճիւղի Վարչութեան տարեկան մշակութային ծրագրերու բաղկացուցիչ մասը: Այդ իսկ նպատակով, Կլէնտէլի Հայ Կեդրոնէն ներս համակարգուած են բազմաբնոյթ պարապմունքներու շարք մը:

Մանկապատանեկան պարախումբի փորձերը տեղի կունենան ամէն Երկուշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, երեկոյան ժամը 5:00-7:30-ը: Պարախումբի ղեկավարութիւնը ստանձնած է պարուսոյց՝ Գագիկ Սարգսեանը:

Երեխաներու երաժշտական կրթութեան զարգացմանը նպաստող դեր ունին դաշնամուրի ուսուցման դասընթացները, որոնք տեղի կունենան Ծաբաթ օրերը: Ուսուցիչն է Նայիրի Քէշիշեանը:

Յաջողութեամբ կը շարունակուին նաեւ ասմունքի եւ թատերգութեան դասարանի աշխատանքները, որոնք ղեկավարութիւնը վստահուած է շնորհալի ասմունքող՝ Ալիս Գապլանճիանի:

Վերոնշեալ բոլոր աշխատանքները կը համարուին նորաբաց կեդրոնին մէջ, նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ Կլէնտէլի Մասնաճիւղի Վարչութեան: Արձանագրութեան եւ տեղեկութիւններու համար կարելի է հեռաձայնել (818) 246-2915 թիւին: Նոր Հայ Կեդրոնի հասցէն է՝ 712 S. Glendale Ave., Glendale.

Արհեստի եւ արուեստի խառնուրդ այս մշակոյթը ծնունդ առած է մարդկութեան պատմութեան վաղ ժամանակներէն եւ լայն տարածում ստացած շատ երկիրներու մէջ, ինչպէս Եգիպտոս, Հնդկաստան, Չինաստան, Եւրոպա:

Ոսկին եւ արծաթը յաճախ գուգակցուած են թանկագին բարերու հետ, ինչպէս՝ սաթ, մարգարիտ, նոնաբար, ադամանդ եւ այլն: Ասկերչութիւնը եւ արծաթագործութիւնը բարձր զարգացման հասած են կիլիկեան Հայաստանի մէջ: Սոյն արուեստներու խոշոր կեդրոններ եղած են նաեւ Վանը, Երզնկան, Կ. Պոլիսը, Երեւանը, Շուշին, Կարսը, Ախալցխան:

Ոսկերչական արուեստի քնագաւառին մէջ այսօր կարեւոր ներդրում ունին հայ գաղթօջախները՝ Հալէպ, Դամասկոս, Լոս Անճելըս: Արծաթեայ եւ ոսկեայ իրերու արտադրութեան մէջ իր ներդրումն ունի Երեւանի Ոսկերչական գործարանը:

Անցեալէն մեզի են հասած հայ վարպետներու պատրաստած թագերը, խոյրերը, մանեակները, ապարանջանները, գաւազանները, եկեղեցական ըսպասները:


ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (շարունակուած)

Դասախօսութիւնը պիտի ուղեկցուի սահիկներու ցուցադրութեամբ, որու միջոցով ունկնդիրները մտովի պիտի այցելեն Արեւմտ. Հայաստանի շարք մը վայրեր. Կարս, Տիգրանակերտ, Ուրֆա, Մուշ, Վան Այնթապ, Անի եւ այլուր:

Երեկոյի մասնակիցները հաղորդակից պիտի ըլլան դոկտ. Մարգարեանի՝ վերջերս Արեւմտ. Հայաստան կատարած այցելութիւնէն ստացած տպաւորութիւններուն

(շարունակութիւն էջ 4)

Մշակութային Կեանքը Օրէնճ Բաունթիէն Ներս



Թարգմանչաց Օրուայ կապակցութեամբ, վարչութիւնը նախաձեռնած է Talent Show-ի ձեռնարկ մը, որ տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 19, 1997-ին, շրջանի Ղուկասեան Սրահին մէջ, կ.ե. ժամը 1-ին: Սոյն ձեռնարկին իրենց մասնակցութիւնը կը բերեն 3-13 տարեկան երեխաներ:

Օրէնճ Բաունթիի Մասնաճիւղի Վարչութեան հրաւերով Համազգայինի «ԱՆԻ» Պարախումբը ելոյթ պիտի ունենայ IRVINE-ի մէջ, Հոկտեմբեր 19, 1997-ին, երեկոյան ճամը 5-ին:

Հոկտեմբերեան ձեռնարկներու շարքին, Մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Համազգայինի Շրջանային Վարչութեան երեկոյին, որ տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 25-ին, երեկոյան ժամը 8-ին Էնսիմոյի «Աւետիսեան» Սրահին մէջ: Գեղարուեստական բնոյթի աշխատանքներով պիտի մասնակցին երեք արուեստագէտներ՝ Ծաբէ Գոնեալեան, Ծողեր Զիրիբեան եւ Պալենց:

Օրէնճ Բաունթիի Մասնաճիւղ

- Հոկտեմբեր 19, 1997, կէսօրէ ետքը ժամը 1-ին Talent Show-ի ձեռնարկ: Վայրը՝ Ղուկասեան Սրահ:

Պըրպլէնքի Մասնաճիւղ

- Հոկտեմբեր 24-25-26, Գեղանկարչական աշխատանքներու ցուցահանդէս: Կը մասնակցին արուեստագէտներ՝ Ալինա Մնացականեան, Ատրինէ Պարանեան, Վազգէն Բրուտեան եւ Հրայր Ծերիբեան: Ցուցահանդէսի ժամերն են՝ Ուրբաթ՝ ժամը 7-11, Ծաբաթ՝ ժամը 12-5, Կիրակի՝ ժամը 3-7: Վայրը՝ Պըրպլէնքի Հայ Կեդրոն, 361 E. Magnolia, #C, Burbank:

- Հոկտեմբերին, բանաստեղծական երեկոյ՝ Արա Գազանչեան պիտի ներկայացնէ իր «Ցուցափեղկին Մէջ» բանաստեղծութիւններու հատորը:

Քրիստանդայի Մասնաճիւղ

- Հոկտեմբերին, Ուրախ Երեկոյ Հալաւոնի առթիւ, 5-14 տարեկան երեխաներու մասնակցութեամբ, տեղւոյն Հայ Կեդրոնին մէջ:

- Նոյեմբերին, «Հնագոյն Երգերու Երեկոյ», մասնակցութեամբ խումբ մը արուեստագէտներու:

Համազգայինի Շրջ. Վարչութիւն

- Հոկտեմբեր 25, ժամը 8-ին, ցուցահանդէս եւ ճաշկերոյթ - պարահանդէս, մասնակցութեամբ Վաչէի եւ իր նուագախումբի: Վայրը՝ «Աւետիսեան» Սրահ, Էնսիմո:

Սան Ֆրանսիսքոյի Վարչութիւն

- Նոյեմբեր 10, 1997-ին, աւանդական դարձած ճաշկերոյթ - պարահանդէս, ուր պիտի պատուով Կարինէ Փեհլիվանեանը, որպէս տարուայ Համազգայնականը: Վայրը՝ «Վասպուրական» Սրահ:

Քրեսանթա Մասնաճիւղի Ձեռնակներ

- Ամերիկեան Հալաւոնի տօնին կապակցութեամբ, Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպած է ուրախ երեկոյ մը 5-14 տարեկան երեխաների մասնակցութեամբ: Նրանք ելոյթ են ունենալու կոկիկ յայտագրով՝ երգ ու պար եւ տարազների մրցում: Մատուցուելու են զանազան ուտելիքներ:

- Նոյեմբեր ամսին նախատեսուած է կազմակերպել «Հնագոյն Երգերի Երեկոյ», որին մասնակցելու են մի խումբ արուեստագէտներ:

- Ծարունակուած են մանկապատանեկան պարախումբի փորձերը՝ Վարդուհի Կատիկեանի ղեկավարութեամբ: Արձանագրութիւնները շարունակուած են: Մանրամասութիւնների համար հեռաձայնել՝ (818) 248-1842 համարով:

ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ (շարունակուած)

Նոյեմբեր 9ին, Գլենդէլի Հանրային Գրադարանի սրահին մէջ, պրոֆ. Լեւոն Աքրահամեան (տես՝ Սան Ֆրանսիսքոյի բաժինը իր մասին) պիտի կարդայ դասախօսութիւն մը՝ «Հայաստան եւ հայ ժողովուրդը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» խորագրով:

Նիւթերու պատրաստութիւն՝	Բառաշարում՝
Կատիա Քուշերեան	Վարուժան Տէմիրճեան
Վարդուհի Քուշերեան	Գրիգոր Ալանաճեան
	Էդդարութիւն եւ բազմագրում՝
	Գրիգոր Ալանաճեան